Իրավ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՆՍՊՆՍ 47-2020

ք. Երևան 26. Փետրվար 2020 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Ն.Հարությունյանի (այսուհետ՝ պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայաստանի նավամոդելային սպորտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությունը, ի դեմս նախագահ Հ. Շահազիզյանի (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1919-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), «Նավամոդելային սպորտի զարգացում» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել՝ 5 178 700 (հինգ միլիոն հարյուր յոթանասունութ հազար յոթ հարյուր)» ~~թվով և բառերով~~ ՀՀ դրամ գումար, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի հավելված N1-ում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. Պայմանագիրը ուժի մեջ մտնելու պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում պահանջելու վճարել իրեն սույն պայմանագրի 1.1-րդ կետով նախատեսված գումարը:

2.2.2. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվապահական հաշվառման վարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով կամ սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով՝ համաձայն սույն պայմանագրի հավելված N 2-ի .

2.4.3. անհրաժեշտության դեպքում պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված ծախսային ուղղություններում իրականացնել յուրաքանչյուր ծախսային ուղղության գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

.2.4.4. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.5. սույն պայմանագրով սահմանված կարգով յուրաքանչյուր միջոցառման ավարտից հետո տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում պետական մարմին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին բովանդակային և ֆինանսական հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.6. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.7. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունը չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.8. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.9. ավարտված միջոցառման փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը (հրամանով հաստատված կարգի համաձայն և ժամկետներում) ներկայացնել պետական մարմին, նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են Ֆեդերացիայում և վերջինս պատասխանատվություն է կրում դրանց իսկության համար:

2.4.10. չծախսված գումարի վերջնական, տարեվերջյան մնացորդը վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ոչ ուշ, քան մինչև 2020 թվականի դեկտեմբերի 25 -ը:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1 Պայմանագիրը ուժի մեջ մտնելու պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում պետական մարմինը վճարում է պայմանգրի 1.1-րդ կետով նախատեսված գումարը:

4.2 Պետական մարմինը վճարումն իրականացնում է անկանխիկ՝ դրամական միջոցները կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում Կազմակերպությունը Պետական մարմնին վճարում է տույժ՝ չներկայացված հաշվետվության համար պետական մարմնի կողմից հաստատված նախահաշվի 0.05 (հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր օրացույցային օրվա համար, իսկ պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը, եթե Պետական մարմնին չի ներկայացրել դրա վերաբերյալ հիմնավոր բացատրություն, վճարում է տուգանք չկատարած աշխատանքի 0,5 (հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.2. Տույժի և տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից կամ պահանջում է հետ վճարել :

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում 2020 թվականի բյուջետային տարում, իսկ գործողությունը տարածվում է 2020 թվականի հունվարի 1-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Հայաստանի Հանրապետության պետական մարմնի կողմից սույն պայմանագրի N1 և N2 հավելվածներով հաստատվում են ծրագրի միջոցառումը և նախահաշիվը, որոնք հանդիսանում են սույն պայմանագրի անբաժանելի մասը:

8.2. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Կառավարական 2-րդ շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032480
ՀՎՀՀ՝ 02698732

Գլխավոր քարտուղար՝

_____ Ն. Հարությունյան

Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի նավամոդելային սպորտի ֆեդերացիա » հասարակական կազմակերպություն
Երևան, Եր.Քոչարի 27-14
«Ինեկոբանկ» ՓԲԸ
հ/հ 205004201039
ՀՎՀՀ՝ 01556458
Նախագահ՝

_____ Հ.Շահազիզյան

Կ.Տ.

Հավելված N1
2020թ. փետրվարի 26-ի
կնքված N ՆՍՊՆՍ-47-2020 պայմանագրի

Մ Ի Ջ Ո Ց Ա Ռ Ո Ւ Մ Ն Ե Ր

NN ը/կ	Իրականացվելիք միջոցառման					
	Անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնաժամկետը	Պահանջվող գումարը (դրամ)
	Նավամոդելային սպորտի զարգացում	Պատրաստել համապատասխան մոդելներ, նախապատրաստվել և ապահովել մասնակցությունը նավամոդելային սպորտի 2020թ. Եվրոպայի առաջնությանը:	Եվրոպայի 2020թ. առաջնությանը մասնակցելու համար պատրաստել ՆԱՎԻԳԱ համաշխարհային կազմակերպության պահանջների համապատասխան Ա/Բ և Ա/Բ-Ե դասերի առնվազն 12 մոդելներ: Առնվազն 5 հոգու մասնակցությամբ կազմակերպել նախամրցումային մարզումներ առնվազն 15 և փորձարկումներ առնվազն 30 անգամ: Բուլղարիայում կայանալիք նավամոդելային սպորտի 2020 թվականի Եվրոպայի առաջնությանը ապահովել առնվազն 5 մարզիկի և 1 միջազգային կարգի դատավորի մասնակցություն /մասնակիցների ցանկը նախապես համաձայնեցնել ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ/:	Եվրոպայի առաջնությանը ՀՀ ազգային հավաքականի մասնակցություն, նավամոդելային սպորտի զարգացում, փորձի փոխանակում:	2020 թվականի դեկտեմբեր	5 178 700 ՀՀ դրամ
	Ընդամենը					5 178 700 ՀՀ դրամ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Կառավարական 2-րդ շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011032480
ՀՎՀՀ՝ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Ն. Հարությունյան
Կ.Տ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«Հայաստանի նավամոդելային սպորտի ֆեդերացիա» ՀԿ
Երևան, Եր.Քոչարի 27-14
«Ինեկոբանկ» ՓԲԸ
h/ h205004201039
ՀՎՀՀ-01556458
Գլխավոր քարտուղար՝
Հ.Շահազիզյան
Կ.Տ.

Հավելված N2
2020թ. փետր. 26-ի
կնքված N ՈՍՊՆՍ 47-2020 պայմանագրի

2020թ. ԲՈՒԼՂԱՐԻԱՅՈՒՄ ԿԱՅԱՆԱԼԻՔ
ՆԱՎԱՄՈԴԵԼԱՅԻՆ ՍՊՈՐՏԻ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

1. Ավիատոմսեր Երևան – Սոֆիա – Երևան	6 x 241250 դրամ = 1447500 դրամ
2. Գիշերավարձ	6 x 12 օր x 22858 դրամ = 1645776դրամ
3. Օրապահիկ	6 x 13 օր x 19421 դրամ = 1514838դրամ
4. Տրանսպորտային ծախսեր դրամ	88940
5. «ՆԱՎԻԳԱ» անդամավճար	212636դրամ
6. Մոդելների մասնակցության անդամավճար	5 x 3 x 15954 դրամ = 239310 դրամ
7. Ապահովագրություն	6 x 4950 դրամ = 29700դրամ

Ընդամենը՝ 5178700դրամ

Որից՝ պետբյուջեի կողմից հատկացվելու է 5178700 դրամ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Կառավարական 2-րդ շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032480
ՀՎՀՀ՝ 02698732

Գլխավոր քարտուղար՝

_____ Ն. Հարությունյան

Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի նավամոդելային սպորտի ֆեդերացիա » հասարակական կազմակերպություն
Երևան, Եր.Քոչարի 27-14
«Ինեկոբանկ» ՓԲԸ
հ/հ 205004201039
ՀՎՀՀ՝ 01556458
Նախագահ՝

_____ Հ.Շահազիզյան

Կ.Տ.